ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Իրաքի հայոց Ազգային Կեդրոնական Վարչության դիվանից ստացվել է 15 ապրիլ 1981 թվականի մի **Հաղորդագրություն**, որից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Իրաքի հայոց թեմի մասին մի շարք եկեղեցական, մշակութային լուրեր:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ԲԱՍՐԱ

1980 թվականի դեկտեմբերի 25-ին Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ ծայրագույն վարդապետը, ընկերակցությամբ Տ. Օշական քահանա Գլճյանի և Ազգային Կեդրոնական Վարչության անդամ տիար Հայկ Բոստանյանի, հովվական այցելության է մեկնել Բասրա: Դեկտեմբերի 26-ին առաջնորդ հայր սուրբը տեղի հայոց եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում, որի ընթացքում ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որով Բասրայի հայոց հոգևոր հովիվ Տ. Կարապետ քահանա Մեսեճյանին արտոնվում էր լանջախաչ կրել առաջնորդ հոր միջնորդությամբ:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐԱՑ ՏՈՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

1981 թվականի փետրվարի 27-ին, ուրբաթ օրը, Վարդանանց տոնին, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում առաջնորդ հայր սուրբը հանդիսավոր պատարագ է մատուցում, որի ավարտին կատարվում է Վարդանանց խորհրդին և հիշատակին նվիրված հանդիսություն ու գործադրության է դրվում գեղարվեստական կոկիկ մի հայտագիր՝ Վարդանանց խորհրդին և նրանց նահատակության վեհությանը նվիրված:

Հանդիսության ընթացքում Տ. Ավագ ծայրագույն վարդապետը քարոզում է Վարդանանց տոնի և խորհրդի եկեղեցական, հայրենասիրության նշանակության մասին, որից հետո կատարվում է Հայրապետական մաղթանք՝ Հայոց Հայրապետի անվանակոչության տոնի առիթով:

ՀԻՇԱՏԱԿԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Անցյալ տարի թեմի առաջնորդ հոր կարգադրությամբ որոշվել էր ամեն տարի մարտ ամսվա ընթացքում հիշատակի մասնավոր հոգեհանգստյան պաշտոն կատարել Իրաքի հայոց թեմի նախկին՝ հանգուցյալ առաջնորդների, տեղապահների և քահանա հայրերի:

Հիշատակի սույն հոգեհանգիստը այս տարի էլ կատարվում է ուրբաթ օրը, մարտի 6-ին, ս. պատարագով և ապա հոգեհանգստյան արարողությամբ՝ ի ներկայության հոծ հավատացյալների:

Հավարտ եկեղեցական արարողությունների, առաջնորդ հայր սուրբը առաջնորդարանի դահլիճում ընդունում է հավատացյալներին և մի անգամ ևս ոգեկոչում հիշատակը Իրաքի թեմում պաշտոնավարած հոգևորականների:

ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ԴԱՐՊԱՍԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ

Մայր եկեղեցու բակը ենթարկվում է վերանորոգության, բարեզարդության և մի նոր դարպասի շինության: Վերանորոգչական-շինարարական այդ օգտակար ձեռնարկների շնորհիվ եկեղեցու բակն ու շրջապատը ստանում են հաճելի և գեղատեսիլ տեսք: Վերանորոգչական-շինարարական ու բակի բարեզարդման ողջ ծախսը հոգում է Բաղդադի հայ համայնքի սիրված ու ծանոթ ազգայիններից տիար Նասրի Միքայել Ալմասյանը:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հուրախություն ողջ հայ համայնքի, Բաղդադի հայոց նոր առաջնորդարանի շինությունն արդեն ավարտվել է, և սկսվել են ներքին կահավորման աշխատանքները:

Նոր առաջնորդարանի շենքի շինությանը և կահավորմանն իրենց սրտագին մասնակցությունն են բերել Բաղդադի հայ համայնքի բարեպաշտ ազգայիններն ու հավատացյալները՝ սրտաբուխ նվիրատվություններով:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1981 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 15-ը ներառյալ, Բաղդադի հայ համայնքի ծոցում տեղի են ունեցել՝

15 պսակադրություններ,
27 մկրտություններ և
33 մահեր:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, ջերմորեն շնորհավորում է Իրաքի հայոց առաջնորդ Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանին և Իրաքի հայոց Ազգային Կեդրոնական Վարչության ժրաջան անդամներին՝ նրանց կատարած եկեղեցական-ազգային, մշակութային ու շինարար գործունեության համար՝ հուրախություն Հայոց Հայրապետի սրտին, ի միխթարություն Իրաքի ողջ հայության և ի բարօրություն իրաքյան մեծ ու հյուրընկալ հայրենիքի: